ՀՐԱՄԱՆ N 59-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

«16» ՓԵՏՐՎԱՐԻ 2016 Թ. **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի N 267-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի 2013 թվականի հոկտեմբերի 17-ի «Միջգերատեսչական աշխատանքային խումբ ստեղծելու, միջգերատեսչական աշխատանքային խմբի աշխատակարգը և որդեգրման հնարավորության մասին եզրակացության ձևը հաստատելու մասին» N 267-Ա հրամանի 1-ին կետում «Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի տեղակալ, (միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար)» բառերը փոխարինել «Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատանքների և մեթոդոլոգիայի բաժնի պետ, (միջգերատեսչական աշխատանքային խմբի քարտուղար)» բառերով, իսկ «Ա.ՕՀԱՆՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի խորհրդական» բառերը փոխարինել «Ա.ԱՂԱՅԱՆ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի օգնական» բառերով:

ԱՐՓԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ